

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/4

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Պողոս Համբարձումյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 414/04 որոշման դեմ:

Ա/Ձ Պողոս Համբարձումյանի գանգատում բերված փաստարկները.

23.11.2015թ-ին փոստային առաքման միջոցով Ա/Ձ Պողոս Համբարձումյանը ստացել է ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի կողմից 17.11.2015թ-ին կայացված «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումար գանձելու մասին» թիվ 414/04 որոշումը, համաձայն որի 16.11.2015թ-ի դրությամբ իր չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 146.936 դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով: Համաձայն վերոնշյալ որոշման պարտավորությունը առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի ուժով 2010թ-ի հունվարից մինչև 2011թ-ի հուլիս ամիսն ընդգրկող ժամանակահատվածի համար հաշվարկված նվազագույն վճարների և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները չվճարելու հետևանքով:

Ա/Ձ Պողոս Համբարձումյանը համաձայն չէ 17.11.2015թ-ին կայացված թիվ 414/04 որոշման հետ և գտնում է, որ առաջադրված պարտավորությունը ամբողջությամբ անհիմն է՝ հետևյալ հիմնավորմամբ.

Պողոս Համբարձումյանը որպես անհատ ձեռնարկատեր գրանցվել է 2002 թ-ից և գործունեություն է իրականացրել մինչև 2009 թ-ը: Այդ ընթացքում պարտաճանաչ կերպով կատարել է բոլոր պարտավորությունները, այդ թվում նաև՝ հարկերը և պարտադիր այլ վճարները: 2009 թ-ին (ստույգ օրն ու ամիսը չի հիշում) դիմում է ներկայացրել Ապարանի հարկային տեսչություն անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը անորոշ ժամանակով դադարեցնելու վերաբերյալ և դրանից հետո մինչ օրս որևէ գործունեություն չի իրականացրել: 2011 թ-ին Ապարանի հարկայինից ստացել է ծանուցում, որով առաջարկվել է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» 2011 թվականին ընդունված ՀՀ օրենքի ուժով կնքել հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց: Օգտվել է նշված հնարավորությունից և 15.07.2015թ-ին Ապարանի հարկային տեսչության հետ կնքվել է վերոնշյալ ժամանակացույցը: Որից հետո համաձայն ժամանակացույցին կատարել է բոլոր վճարումները և 2012 թ-ի մայիս ամսին այն գրոյացրել է: Այդ ժամանակ Ապարանի հարկայինում բանավոր կերպով տեղեկացրել են, որ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակից բխող որևէ պարտավորություն չունի:

Վերոնշյալ հիմնավորումներից ելնելով Ա/Ձ Պողոս Համբարձումյանը գտնում է, որ առաջադրված հարկային պարտավորությունը անհիմն է, հետևապես 17.11.2015թ-ի թիվ 414/04 որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռաումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Պողոս Համբարձումյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 16.11.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունները կազմում են 146.936 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նվազագույն սոցիալական վճարների գումարները 2010 թ-ի հունվարից մինչև 2011 թ-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 17.11.2015 թ-ին ընդունվել է թիվ 414/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Պողոս Համբարձումյանից 146.936 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Պողոս Համբարձումյանի կողմից 2010 թ-ի հունվար ամսից մինչև 2011 թ-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում չեն վճարվել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նվազագույն սոցիալական վճարների գումարները:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Պողոս Համբարձումյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնվել է 2011 թ-ի հուլիս ամսին, որից հետո նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորություններ չեն հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ 15.07.2015թ-ին Ապարանի հարկային տեսչության հետ կնքվել է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց և վճարվել են բոլոր

պարտավորությունները, ապա այս կապակցությամբ հարկ է նշել, նշված ժամանակացույցը կնքվել է ոչ թե 2015 թ-ին, այլ 2011 թ-ի օգոստոս ամսին: Ընդ որում, ժամանակացույցով մարվել են մինչև 2009 թ-ի դեկտեմբերի 31 ընկած ժամանակահատվածում առաջացած պարտավորությունները:

Քննարկվող դեպքում խոսքը վերաբերվում է 2010 թ-ի հունվար ամսից մինչև 2011 թ-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում նվազագույն սոցիալական վճարի գծով հաշվարկված պարտավորություններին, որոնք Ա/Ձ Պողոս Համբարձումյանի կողմից չեն կատարվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 414/04 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ